ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Երևան, Չարենցի 12, թիվ 53, 1-5

հեռ. (+374 10) 59 22 59, էլ. փոստ՝ unibank@unibank.am

Ինտերնետային կայք՝ www.unibank.am

Հաշվետվություն թիվ 07, 01.07.2025թ.

<ՅՈՒՆԻԲԱՆԿ> ԲԲԸ բաժնետերերի
2024թ. տարեկան ընդհանուր ժողովի կայացրած որոշումների վերաբերյալ

30.06.2025թ. համատեղ ներկայության կարգով <Յունիբանկ> ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի կողմից կայացվել են հետևյալ որոշումները՝

1. Հաստատել <Յունիբանկ> ԲԲԸ 2024թ. գործունեության վերաբերյալ Վարչության տարեկան հաշվետվությունը:
2. Հաստատել <Յունիբանկ> ԲԲԸ 2024թ. ֆինանսական հաշվետվությունները:
3. Հաստատել <Յունիբանկ> ԲԲԸ 2024թ. Ներքին աուդիտի հաշվետվությունը:
4. <Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի քանակական կազմը սահմանել յոթ հոգի: Վերընտրել Խորհրդի անդամներին և կազմը հաստատել հետևյալ կերպ՝ Գագիկ Զաքարյան, Գեորգի Պիսկով, Հրահատ Արզումանյան, Վարդան Աթայան, Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտտ (անկախ), Ռուբեն Ինջիկյան (անկախ), Կարինե Մինասյան (անկախ):
5. Հաշվի առնելով <Յունիբանկ> ԲԲԸ 2024թ. գործունեության ֆինանսական արդյունքը,
   - Բանկի կուտակված շահույթից սովորական անվանական բաժնետոմսերով վճարել տարեկան շահութաբաժիններ դրամով՝ 7,777,340,300 ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով, մեկ բաժնետոմսի մասով 40,66 ՀՀ դրամ հաշվարկով,
   - տարեկան շահութաբաժինների վճարումն իրականացնել 01.07.2025թ.-ից մինչև 31.07.2025թ. ընկած ժամանակահատվածում սովորական անվանական բաժնետոմսերի սեփականատերերին, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ,
   - պահուստային հիմնադրամին հատկացնել Բանկի 2024թ. զուտ շահույթի 5% - ը:
6. Հաստատել «ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը որպես «Յունիբանկ» ԲԲԸ 2025-2026թթ. Ֆինանսական գործունեության արտաքին աուդիտն անցկացնող անձ:
7. Միանալ Հայաստանի Հանրապետության Կորպորատիվ կառավարման կանոնագրքին:
8. <Յունիբանկ> ԲԲԸ բաժնետոմսերի բոլոր հաջորդող լրացուցիչ թողարկումների տեղաբաշխումն իրականացնել բաց բաժանորդագրության միջոցով, եթե տեղաբաշխման այլ ձև չնախատեսվի բաժնետերերի ժողովի կողմից:

Վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյան